

Առաջադրյալ

ՌՈՒՍԵՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Առաջավոր մարդկության կուլտուրայի պատմության մեջ ոռոսաց կուլտուրան և լեզուն բացառիկ տեղ են զբաղում: Ռուսաց լեզուն մարդկության ամենամեծ նվաճումներից մեկն է. նա զոյացել է բազմաթիվ աղբյուրներից, զարգացել ու դարձել է աշխարհի առաջավոր մարդկության պրոգրեսիվ զաղափարների արտահայտիչն ու շտեմարանը: Նա ոռոս մեծ ժողովրդի մայրենի լեզուն է, բայց հավասարապես սիրելի է սովետական երկրի բոլոր ժողովուրդներին և աշխարհի առաջավոր մարդկությանը, որովհետև այդ լեզվով են տարածվում Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի զաղափարները, նրանով են գրված համամարդկային կուլտուրայի պատմության ոսկե ֆոնդը մտած գեղարվեստական, գիտական, փիլիսոփայական բազմաթիվ մեծարժեք ստեղծագործություններ:

Ռուսաց կուլտուրան և լեզուն բարերար ազդեցություն են գործում ոչ միայն Սովետական Միության բազմազգ ժողովուրդների, այլև ամբողջ աշխարհի ազատասեր ժողովուրդների լեզուների և կուլտուրաների զարգացման վրա:

Այդ բարերար ազդեցությունը մենք նկատում ենք նաև մեր լեզվի և կուլտուրայի զարգացման բնագավառում:

Հայ ժողովուրդը ոռոս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ հաստատեց սովետական իշխանություն, կարճ ժամանակում վերականգնեց ծայր աստիճան քայքայված տնտեսությունը և իր կուլտուրան ու լեզուն զարգացման այնպիսի աստիճանի հասցրեց, որի մասին նախասովետական շրջանում երազել անգամ չէր կարող: Մեր գրական լեզուն ազատվեց արվեստական, անհասկանալի դառնալու վտանգից, և երկրում հաստատված կուլտուրական, գիտական, մանկավարժական և այլ հաստատությունների, ինչպես նաև դպրոցական ցանցի ընդարձակման շնորհիվ՝ մատչելի դարձավ հայ ժողովրդի ամենալայն խավերին: Նա դարձավ Հայկական ՍՍՌ պետական լեզու, մամուլի ու դպրոցի, պաշտոնական գրագրությունների և գրական երկերի պարտադիր լեզու: Անհամեմատելի չափով հարստացավ մեր լեզվի բառապաշարը. ռուսերենից նրա մեջ մտան բազմաթիվ նոր բառեր ու տերմիններ, որոնք մինչև սովետական կարգերը մեր երկրում հաստատվելը անծանոթ էին մեր ժողովրդին: Հայոց լեզուն, նրա զարգացման համար ստեղծված բարենպաստ պայմանների հետևանքով, փոխեց իր բովանդակությունը և վերածվեց այնպիսի մի հզոր միջոցի, որի օժանդակությամբ մեր ժողովուրդը պայքարում է բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային նոր կուլտուրա կերտելու համար:

Սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո հայագիտության առաջ բացվեցին նոր հեռանկարներ: Նա սովետական գիտության

նվաճումների հիման վրա մշակվեց և զարգացման նոր մակարդակի վրա դրվեց: Փորձենք շատ ընդհանուր գծերով նշել մեր լեզվի մեջ կատարված այն փոփոխություններն ու տեսականորեն լուծված այն հարցերը, որոնք կապվում են ուսուցիչների ազդեցության հետ:

1. ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Հայ լեզվաբանները նախասովետական շրջանում հսկայական աշխատանք էին կատարել մեր լեզվի զանազան հարցերի մշակման բնագավառում, սակայն նրանք տեսական եզրահանգումների մեջ ղեկավարվել էին հնդեվրոպական լեզվաբանության մշակած սկզբունքներով: Սովետական պայմաններում մեր լեզվաբանությունը ազատվեց հնդեվրոպաբանության ազդեցությունից և ուսական լեզվաբանության օրինակով՝ ճիշտ լուծեց մեր լեզվի մի շարք հանգուցային հարցեր: Դրանցից ամենակարևորը հայոց լեզվի կազմավորման հարցն է: Հայտնի է, որ հնդեվրոպաբանները հայոց լեզուն հնդեվրոպական լեզուների մեջ մտցնելով՝ ուսումնասիրել էին միայն նրա հնդեվրոպական տարրը. սովետահայ լեզվաբանները օգտագործելով Ն. Մառի նվաճումները, բացահայտեցին հայոց լեզվի կազմավորման մեջ վճռական դեր խաղացած բնիկ ժողովուրդների լեզուների մնացորդները և ցույց տվին, որ հայոց լեզուն առնչակցվում է նաև խեթական, ուրարտական և այլ բնիկ ժողովուրդների լեզուների հետ¹:

Հայ էթնիկական լեզվի կազմավորման հարցը լուծելու հետ միասին վճռվեցին նաև գրաբարի ու ժամանակակից հայերենի կազմավորման հետ կապված շատ խնդիրներ: Մի շարք հետազոտություններում ցույց տրվեց, որ բարբառները ավելի հին անցյալ ունեն, քան մեր գրական լեզուները (գրաբարը, միջին հայերենը և ժամանակակից գրական լեզուները), որոնք ձևավորվել են սեր ժողովրդի զարգացման տարբեր աստիճաններով ու հասարակական տարբեր հարաբերություններով պայմանավորված լեզվամտածողության հիման վրա և միմյանցից զանազանվում են ինչպես լեզվական իրողություններով, նույնպես և իրենց բովանդակությամբ:

Ռուս լեզվաբանները մշակեցին նոր ուսմունք՝ խոսքի մասերի առաջացման մասին: Այդ ուսմունքն իր արտացոլումը գտավ նաև մեզ մոտ: Հայ լեզվաբանները հետևելով ռուս լեզվաբաններին, և առաջին հերթին Ն. Մառին, սկսեցին պարզաբանել խոսքի մասերը որպես մտածողության կատեգորիաներ, որոնք առաջացել են պատմականորեն, արտացոլելով մարդկային հասարակության զարգացման տարբեր աստիճանների պրակտիկան:

Այսպիսով՝ սովետական լեզվաբանության նվաճումներից ելնելով՝ Սովետական Հայաստանի լեզվաբանները նոր մոտեցումով լուսաբանեցին ընդհանուր լեզվաբանության մի շարք տեսական պրոբլեմներ:

Տեսական այդ հարցերի պարզաբանումն ունեցավ նաև իր գործնա-

¹ Տե՛ս՝ Ս. Ղազարյան—Ուրարտուի պատմությունը և մյուս ուսումնասիրությունները: Ա. Ղազարյան—Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն: Ենթադրություն հայ բարբառագիտության և այլն:

² Գ. Սեվակ—Խոսքի մասերի ուսմունքը (Պետամայաբանի Տեղեկագիր, հատ. XI, 1939 թ.):

կան հետևանքները. մշակվեցին լեզվաբանական մի շարք դիսցիպլինների դասընթացներ, կազմվեց դպրոցական նորմատիվ քերականությունը, որը փոխարինեց միւր դպրոցում երկար ժամանակվանից բուն դրած ֆորմալ քերականությանը: Այդ բոլոր տեղաշարժները, իհարկե, չկատարվեցին տարերայնորեն. մեր պարտիան ու պետությունը օգնեցին ինտելիգենցիային մշակելու ինչպիսի գիտական այլ դիսցիպլինների, նույնպես և լեզվաբանության առանձին հարցեր և կազմելու այնպիսի դասագրքեր, որոնք բավարարում են սովետական առաջավոր գիտության պահանջները: Այդ պատճառով էլ հաճախ մեր ժողովուրդների լեզուների ու կուլտուրաների միջև ստեղծվում են ոչ միայն բովանդակութամբ, այլև ձևով ընդհանուր երեվոյթներ, որոնք միանգամայն անհասկանալի կարող են լինել մեր կյանքին անծանոթ մարդկանց: Ռուս և հայոց լեզուների դպրոցական քերականությունները շատ կողմերով նման են միմյանց, թեև ավելի վաղ է լույս տեսել հայերենի քերականությունը: Այդ նմանությունները, իհարկե, անմիջական աղղեցության հետևանք չեն. նրանք առաջացել են այն բանի շնորհիվ, որ ինչպիսի ուսու, նույնպես և հայ քերականները ժամանակակից լեզվի հարցերը մշակելիս ղեկավարվել են Համ Կ(բ)Պ Կենտկոմի որոշումներով ու ցուցումներով և նկատի ունեցել սովետական լեզվաբանության բնագավառում ձեռք բերված նվաճումները: Իսկ այդ նվաճումները առաջին հերթին ռուսաց լեզվի իրողությունների վրա են հիմնված: Եվ այժմ ընդհանրապես մեր երկրի ժողովուրդների կուլտուրաների ու լեզուների մեջ չի կարող կատարվել որևէ առաջադիմական տեղաշարժ, առանց ռուսաց կուլտուրայի ու լեզվի ներգործության: Այդ տեսակետից շատ հետաքրքրական են մեր լեզվի բառապաշարի մեջ կատարված տեղաշարժները. որոնք և՛ իրենց որակով, և՛ քանակով գերազանցում են նախասովետական ամբողջ շրջանում մեր բառասուղարի մեջ կատարված տեղաշարժներին:

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՏԵՂԱՇԱՐՄԱՆԵՐԸ

Սովորաբար ասում են, թե տվյալ լեզվի բառերի ամբողջությունը՝ իր իմաստային բոլոր դրսևորումներով հանդերձ, կազմում է այդ լեզվի բառապաշարը: Լեզուների բառապաշարը, սակայն, ամբողջությամբ չի կարելի գետնից բառարաններում, որովհետև լեզուն, որպես մարդկային հասարակության անմիջական ու բնորոշող արտադրանքը, ամեն բոլոր բաների վրա է փոփոխման ու զարգացման, իսկ բառարանը կարող է արտահայտել որևէ լեզվի հարաբերականորեն կայուն որոշ շրջանի բառամթերքի մի կողմը միայն: «Բառապաշարը երբեք վերջնականապես չի ամբողջացվում, — ասում է Վանդրիեսը, — քանի որ նա կապված է շրջապատող պայմանների հետ: Յուրաքանչյուր խոսող յուր կյանքի ընթացքում միշտ լրացնում է յուր բառապաշարը՝ փոխառնելով բառեր իրեն շրջապատող միջավայրից: Մենք անդուլ կերպով ընդլայնում, նեղացնում ու փոփոխում ենք մեր բառապաշարը. դա ձեռք բերվող և անհետացող բառերի անընդհատ շրջանառութուն է»:

Բառապաշարի փոփոխման ու զարգացման կոնկրետ պատճառները շատ

¹ Вандриес, „Язык“, էջ 181:

ու շատ են: Բայց մենք քննելու ենք միայն այն երևույթները, որոնք կապված են օտար փոխառությունների և ազդեցությունների հետ:

Օտար փոխառությունները հիմնականում տեղի են ունենում՝ 1. այն ժամանակ, երբ ստեղծվում են հասարակական նոր հարաբերությունների հետ առնչակցված բառակազմություններ ու հասկացություններ, որոնք տարածվելով իրենց հետ տանում են նաև նոր տերմինը: 2. երբ կուլտուրական մշակույթների ու այլ հարցերի առանձին կողմերն արտահայտող տերմիններ են դոյանուս: 3. երբ այս կամ այն ժողովրդի լեզվում եղած հին հասկացություններն արտահայտող բառերը փոխարինվում են նոր բառերով: Այս դեպքում հին տերմինների փոխանորդումը կատարվում է մեծ մասամբ այն ժամանակ, երբ տերմինները փոխառնող ժողովուրդը գտնվում է փոխատու ժողովրդի ուժեղ ազդեցության տակ: 4. երբ ուժեղ կամ ավելի զարգացած լեզվից տառացի թարգմանություն (կալկա) է կատարվում:

Մեր ժողովուրդները ուսերենից անարգել ձևով վերցնում են ռուսական և օտար այնպիսի բառեր, որոնք մեծ չափով օժանդակում են նոր հասկացությունների ըմբռնմանը: Սակայն մեր ժողովուրդների լեզուների մեջ ստեղծված նոր երևույթները լոկ բառափոխանորդումով չեն սպառվում: Նրանք հաճախ արտահայտում են նաև այն ընդհանրությունները, որոնք առաջացել են սովետական միասնական բառաստեղծության հետեւյալնքով: Բսկ սովետական երկրի ժողովուրդների լեզուների բառաստեղծական միասնական պրոցեսը խարսխված է մեր լեզուների սոցիալիստական բովանդակության և ազգային ձևի վրա: Այդ միասնական բովանդակությունը հանդիսանում է այն հիմնական գործոնը, որը մեր լեզուների զարգացման ընթացքում ստեղծում է այնպիսի ընդհանրություններ, որոնք արտահայտվում են սովետական անալոգիական բառակազմությունների ազդեցությունների սֆերայի ընդարձակմամբ: Միության ժողովուրդների, ինչպես նաև Եվրոպայի և այլ երկրների ժողովուրդների լեզուներում ռուսաց լեզվի ազդեցությամբ առաջացած նույնական բառերի և բառակազմությունների տառածամբ և սովետական ինտերնացիոնալիզմի տեղեկեցի ուժեղացմամբ: Այդ բոլորը միանգամայն նոր որակ ու նոր թափ են հաղորդում մեր ժողովուրդների, որոնց թվում նաև հայ ժողովրդի լեզվի զարգացմանը:

Փոխառություններ են կատարվել մեր լեզվում նաև նախասովետական շրջանում, բայց դրանք տարբեր որակի են և պայմանավորված են եղել հայկական բուրժուազիայի քաղաքական ձղտումներով: Իսկ հայ բուրժուազիան մերթ ձգտել է ըստ ամենայնի զարգացնել մեր լեզուն՝ «մաքրելով» օտարաբանություններից, մերթ աշխատել է որքան կարելի է շատ բառեր փոխ առնել և «եվրոպականացնել» մեր լեզուն: Եվ այդ բոլոր դեպքերում էլ նկատի է ունեցել միայն իր, և ոչ ամբողջ հայ ժողովրդի շահերը: Իսկ սովետական պայմաններում հիմնիվեր փոխվեցին ինչպես մեր լեզվի զարգացման, նույնպես և բառերի փոխանորդության պայմանները:

Ա. ԱՆԱԼՈՒԳԻԱԿԱՆ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԲԱՌԵՐ

Նոր իրադրության հետևանքով մեր ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունների առաջին արձանագիրը հանդիսացավ մեր լեզուն, որը

ռուսերենի ազդեցությամբ ու նմանողությամբ կազմեց բաղաժիվ նոր բառեր ու բառակազմություններ, որոնց գեոակշոոդ մեծամասնությունը տարրերվում է մինչ այժմ մեր լեզվում ստեղծված բառակազմություններից՝ աշխօր, լուսժողկոմ, առաջֆաշոմ, գերազանցիկ և նման այլ նոր բառաստեղծումներ չեն կարող նույնացվել հունարենի նմանությամբ մեր թվականության 6—7-րդ դարերում կազմված բառաձևերի հետ։ Մեր ժողովրդի լայն զանդվածներին այն ժամանակ անհասկանալի էին ստորագրել, ներածել, արտածել, տրամաբանել, ներբողել, մակաբայել, մակածություն, պարունակություն, դերանունություն, միջարկություն, ստորագրություն, անդրապատկերում և շատ այլ բառեր, որոնք հունարենի ձևական ընդօրինակություն էին, թեև նրանց կազմության ժամանակ օգտագործված էին միայն հայերենի լեզվական հնարավորությունները։

Այժմ ռուսերենի նմանողությամբ կազմված շատ բառեր այնքան տարածված ու հասկանալի են և՛ գյուղացուն, և՛ բանվորին, և՛ ինտելիգենտին, որ հաճախ նրանց սկզբնաղբյուրը գտնելը անհնարին է դառնում։ Նոր ստեղծված բառերի զգալի մասը ժողովրդի խոսակցական լեզվից է մտնում մեր գրականության մեջ։ Այդ նոր բառակազմությունների տարածման ու մասսայականացման պատճառը այն նպաստավոր պայմաններն են, որոնք ստեղծվել են մեր լեզվի զարգացման համար։ Ռուսերենի անալոգիայով կազմված հարվածային (ударник), հնգամյակ (пятилетка), կոլտնտեսություն (колхоз), կոլտնտեսական (колхозник), մենատնտես (единоличник), ինքնաքննադատություն (самокритика), վնասարարություն (вредительство), զտում (чистка), զրահահար (бронированный), ինքնահոս (самотек) և նման այլ բաղաժիվ բառակազմությունները տառացի թարգմանություններ (կալկա) չեն, այլ ձևավորվել են ռուս և այլ ժողովուրդների համար ստեղծված ընդհանուր իդեոլոգիայի հիման վրա, թեև առաջատարը այստեղ ռուսաց լեզուն է։ Այդ և նման շատ այլ նոր բառեր հաճախ ստեղծվում են միմյանցից անկախ, միաժամանակ, որովհետև մեր երկրի բոլոր ժողովուրդները ակտիվ կերպով մասնակցելով սոցիալիստական շինարարությանը և ստեղծելով նոր կուլտուրա՝ ընկալում են մեր իրականությունը միևնույն ձևով, լեզվական միևնույն իմաստներով։ Այստեղ ազգային ձևով արտահայտված է այն նորը, որ չտեսնված արագությամբ մասսայականանում ու արժատանում է մեր լեզվում։ Անալոգիայով կազմված աշխօր, առաջֆաշոմ, գերազանցիկ, գրոնիչ և այլ նորակազմությունները չեն տարբերվում ռուսական համապատասխան իմաստ արտահայտող բառերից, որովհետև և ռուսերեն, և՛ հայերեն այդ նոր բառակազմությունները ձևավորվել են միմյանց հետ սերտորեն կապված ժողովուրդների ընդհանուր գոյավիճակի պայմաններում։ Նրանց գոյացման աղբյուրը մեկ է, բովանդակությունը միասնական, միայն ձևն է տարբեր։ Մարդկության պատմության զարգացման նախասովետական ամբողջ շրջանում՝ նախնադարյան կոմունիստական հասարակությունից սկսած մինչև կապիտալիստական հասարակարգը, նոր հասկացությունների գոյացման, նոր բառերի ստեղծման այդպիսի երևույթներ չեն եղել։ Հին ժամանակներում շատ ժողովուրդներ կամ պասսիվ կերպով ընկալել են առաջավոր կուլտուրայի ազդեցությունը, կամ բռնի կերպով ենթարկվել ավելի ուժեղ ժողովուրդների ներգործությանը

և ընդունել նրանց կուլտուրան ու լեզուն: Մեր երկրում նման բան տեղի ունենալ չի կարող:

Սովետական շրջանի հայոց լեզվի զարգացման մեջ առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն անալոգիական բառակազմությունները: Նրանք արտահայտում են տարբեր ձևերով՝ ուսերենի անալոգիայով հայերեն բառերից կազմված նոր բառակազմությունների (պատի քերք, աշխօր, հարվածային, գերազանցիկ և այլն), ուսերեն բառերի մի մասի թարգմանության, իսկ մյուսը նույնությամբ պահելու միջոցով (կոմտեսություն, սովետական իշխանություն, սովետական տնտեսություն և այլն), ուսերեն բառերի բառացի թարգմանության եղանակով և այլն:

Այդ բոլոր երևույթներն էլ նոր բովանդակություն ունեն և պայմանավորված են մեր երկրում ստեղծված ընդհանուր իդեոլոգիայով: Այդ պատճառով էլ շատ նոր բառեր ու բառակազմություններ արդեն գործածությունից դուրս են ընկել, թեև զոյացել են սովետական պայմաններում, կամ նոր իմաստ ու գործածություն ստացել: Սրանից ընդամենը մի քանի տարի առաջ քիչ բառը, սկզբնական պարտիական կամ կոմերիտական կազմակերպության նշանակությամբ, լայն գործածություն ունեւ, բայց այժմ այդ առումով արդեն չի չիրառվում: Հայերեն հեղյում, զավկում բառակազմությունները ստեղծվել են մեր երկրում սոցիալիստական կարգերը հաստատվելուց հետո և շատ հասկանալի են եղել մեր ժողովրդական լայն զանգվածներին, բայց այժմ հիշվում են միայն որպես պատմական իրողություններ և ոչ որպես կենդանի, խոսակցական լեզվի մեջ մտած բառեր:

Այդ բառերի թախտին են արժանացել նաև մի շարք այլ նորակազմություններ, որոնք արտահայտել են տվյալ շրջանի հետ կապված հասկացությունները: Ենպ և Ենպման, լիկլայան, քերև հեծելագոր, աշխբորսա բառակազմությունների իմաստը այժմ կարող է նույնիսկ անհասկանալի լինել մեր երիտասարդ սերնդին, որովհետև դրանք արդեն հատուկ չեն մեզ համար, կամ չեն արտահայտում մեր երկրի զարգացման ներկա էտապի հետ առնչված ըմբռումները:

Այդ բառերի առաջացման, տարածման կամ անգործածական դառնալու պրոցեսը այնքան օրինաչափ է և այնքան սերտորեն է կապված մեր Միության բոլոր ժողովուրդների միասնական մտածության հետ, որ չի կարող հատուկ լինել միայն մեր լեզվին:

Բ. ՆՈՒՅՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՌԵՐ

Մեր լեզվի զարգացման նոր հնարավորություններից մեկն էլ նույնական (իդենտիկ) բառակազմություններն են, որոնք նույնպես ստեղծվում և տարածվում են մեր լեզվում՝ ուսերենի ազդեցությամբ: Այդ երևույթն ընդհանուր է առհասարակ Սովետական Միության բոլոր ժողովուրդների լեզուներին, միայն այն տարբերությամբ, որ մի լեզվում դրանք կարող են լինել նույնական բառակազմություններ, իսկ մի այլ լեզվում՝ անալոգիական. պատի քերք, ու՛մ, հանգստի օր, հարվածային բառակազմություններն ու բառերը կազմվել են ուսերեն стенная газета, кто кого,

выходной день, ударник բառերի նմանողությամբ և անալոգիական բառակազմություններ են, մինչդեռ նրանք ուկրաինեբենում և Միության մի շարք այլ լեզուներում նույնական (իդինտիկ) են։ Եվ ընդհակառակը, մի շարք հասկացություններ մեր լեզվում արտահայտվում են նույնական բառակազմություններով, իսկ շատ այլ լեզուներում՝ անալոգիական. սովետական մեզ մոտ նույնական է, իսկ ուկրաինեբենում՝ անալոգիական (рада) և այլն։

Նույնական նման բառակազմությունները լայն կիրառություն ստացան միայն սովետական իշխանությունը մեր երկրում հաստատվելուց հետո և տարրերվում են նախասովետական շրջանում կազմված նույնական բառակազմություններից։ Կոմսոմոլ, կոլխոզ, բրիգադիր, սովետ, պարտիա, Արմֆայն, կուլտ-ֆունդ նույնական բառակազմությունները կապված են նոր դադափարախոսության հետ և անհասկանալի են մեր կյանքին անձանթ մարդկանց։

Հաճախ նույնական և անալոգիական բառակազմությունները հանդես են գալիս միասնաբար. սովետական իշխանություն, սովետական տնտեսություն, մարզկոմ, կոլվար, բրիգադավար, կոլտնտեսություն, ֆաղսովետ, Սովետական Միություն, կոմերիտական և այլ բառակազմությունների մի եզրը փերցված է անփոփոխ, իսկ մյուսը թարգմանված է հայերեն համապատասխան բառերով։ Նույնիսկ այդպիսի բառակազմություններն էլ անհասկանալի կարող են լինել մեր երկրից դուրս ապրած մարդկանց։ 1930 թվին Նյու-Յորքում լույս տեսած հայերեն մի բառարանում մեր կյանքի զանազան երևույթներ արտահայտող նույնական և անալոգիական բառակազմությունները թարգմանված են մեզ համար միանգամայն տարօրինակ ձևով. հեղինակի կարծիքով՝ ԲՈՒՀ — բանվոր ուսանողների պատրաստող հիմնարկ է, ԴՊՈՒ՝ պետական քաղաքական ոստիկանական վարչություն, ՋԱԿՈՒ՝ ամուսնության և ամուսնալուծության վարչություն, Զինկոուպ՝ զինվորական համադորձակցական միություն, կոմերիտ՝ համայնավոր երիտասարդ, կուլտ-ֆունդ՝ մշակութային դրամագլուխ, կուսակտիվ՝ կուսակցական դործունեություն, եռանդ՝ գործոն դեր, մարզկոմ՝ մարզական (ֆիզիկական մարզանքների) կոմիտե և այլն։ Բերված օրինակները ցույց են տալիս, թե որքան տարրեր են մեր ըմբռնումները արտասահմանում ապրող մեր երաշխակիցների հասկացողություններից։ Եվ այդ հասկանալի է, մեր ժողովրդի կյանքում կատարված յուրաքանչյուր տեղաշարժ անմիջապես արտացոլում է մեր լեզվի մեջ և հաճախ այնպիսի բառերի միջոցով, որոնք վաղուց դորձածական են եղել մեր լեզվում, բայց ոչ այն իմաստով, ինչ իմաստով սկսում են դորձածվել արտահայտելով հասարակական նոր հարբերությունների հետ կապված դադափարներ։

Այդ նոր իդեոլոգիան արտահայտող բառերն ու նոր բառակազմությունները առաջին հերթին տարածվում են ուսաց լեզվի ազդեցությամբ, բայց այստեղ չի բացառված նաև փոխազդեցությունը։ Մեր երկրի զանազան ժողովուրդների, որոնց թվում նաև հայ ժողովրդի լեզվից ուսաց լեզվին են անցել մի շարք բառեր, որոնցից կարելի է նշել հետևյալները.

¹ Այլ և քսան դր Մ ե ի բ. — Գրպանի միջոցային հանրադիտարան, Նյու-Յորք, 1930 թ.։

աշուղ (ашуг), յար (яр), ջան (джан), հարիսա (ариса, хариса), վիշապ (вишэп), դարիբ (каринб), կարաս (карас), լավաշ (лаваш), սեպուհ (сепух), խալ (хал), շարական (шаракан) և այլն: Այդ բառերը ուսուցիչների մեջ են մտել շնորհիվ այն բանի, որ հայկական կուլտուրայի զանազան բնագավառներին վերաբերող երկեր, ինչպես նաև մեր գրականության արժեքավոր ստեղծագործությունները սկսեցին թարգմանվել ուսուցիչներին և ուսուցիչների միջոցով համաշխարհային ասպարեզ մտան: Այդ բառերի մեջ չենք հաշվում հայ սշակույթի հետ կապված գիտական տերմինները, որոնցից շատերը վաղուց ի վեր ուսաց լեզվի մեջ են մտել:

Մեր Միության ժողովուրդների միջև ստեղծված սերտ կապը հասցրեց նրան, որ շատ հատուկ անուններ, որոնք տեղական, սոցալին երանգավորում ունեն, արդեն հասկանալի են դարձել մեր բոլոր ժողովուրդներին:

Ռուսերենի միջոցով մեր լեզվի մեջ մտած նույնական բառերի և բառակաղնթյունների թիվը գնալով աճում է: Այդ մեր լեզվի դարգացմանը մեծ թափ հաղորդող և անհրաժեշտ բառաստեղծական միջոցներից մեկն է, որը արագացնում է նաև մեր ժամանակակից հայերենի համադրային լեզու դառնալու պրոցեսը:

Գ. ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵՐ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Լեզվաբանության մեջ ընդունված է ասել, թե լեզվի ինքնուրույն բառերի հիմնական պատկերացումները, երբ այլևայլ դեղորդություններով աղերսակցվում են կողմնակի պատկերացումների կամ հասկացությունների հետ, իմաստային շեղումներ կամ տարբերակումներ են հարուցում: այդ ձևով փոխվում է բառի իմաստը և ստեղծվում նոր բառ, թեև հաճախ պահպանվում է բառի հնչյունական կոդը: Զփոխելով լեզվի բառապաշարի զարգացման այդ ընդհանուր օրինաչափությունները պետք է նշենք, որ ժամանակակից հայերենի բառերի իմաստի փոփոխությունն այժմ կատարվում է նաև ուսուց լեզվի ազդեցությամբ:

Մեր հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխություններն ուղղակի կիրպով արտացոլում են մեր լեզուների մեջ: Օրինակ, գտել բառի նոր իմաստը ոչ թե առաջացել է հայոց լեզվում անկախ կերպով, այլ մեր տնտեսական ապարատը խորթ տարրերից մաքրելու քաղաքականության պահանջով: Այդ է նման բազմաթիվ այլ հայերեն բառեր փոխել են իրենց իմաստը ուսուցիչների անալոգիայով: Բայց այդ անալոգիական բառակազմությունները, ինչպես ցույց է տրված, մեր ժողովուրդների տնտեսական ու քաղաքական կյանքով պայմանավորված հասարակական ընդհանուր իդեոլոգիայի արտացոլություն են: Մեր լեզվում այժմ զործածվող շատ բառեր, ինչպես՝ չֆավոր, չֆավորություն, օղակ, վնասարար, վարժապետ, մրցում, մրցություն, հերոս, աշխատանքի հերոս, հանգստի օր, շաքաթօրյակ, սկզբնական կազմակերպություն, հարվածային աշխատանք, ձեռնարկություն, հիմնարկություն, ձեռագործ, բարիք, հայրենիք, զենք, ֆաշիստություն, պաշտոնյա, աշխատավարձ և այլն, իրենց նոր իմաստով, ընդհանուր իդեոլոգիայի հետ են կապված:

Այդ բառերից յուրաքանչյուրը նոր իմաստ է ստացել համաձայն իր կատարած հասարակական ֆունկցիայի. օրինակ՝ չֆալոր. չֆալորույթյունը բառերը: Այդ բառերը սկզբնական շրջանում նշանակել են չունեցողը, չունեցում: Սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո նրանք նոր իմաստ ստացան. նրանցով նշվեցին ոչ թե չունեցողը, չունենալը հասկացողությունները, այլ՝ գյուղական բնակչության այն բազմաքանակ շերտը, որը մեր հենարանն էր գյուղում: Երբ փոխվեցին գյուղում եղած հարաբերությունները, այդ բառերը համարյա անդործածական դարձան և կգա ժամանակ, երբ այդ իմաստով չեն գործածվելու մեր խոսակցական լեզվում: Ողակ՝ ռուսերեն համապատասխան բառի (звено) նմանությամբ նոր իմաստ է ստացել և նշանակում է արտադրական փոքր միավոր (բրիգադի օղակ), ինչպես նաև պիոներական ջոկատի մի խումբը՝ օղակը: Իմաստային նման փոխանցումներով կազմված բառերի թիվն անընդհատ կարելի է մեծացնել, բայց նշածն էլ բավական է բառիմաստի փոփոխման այդ կողմը ցույց տալու համար: Այդ երևույթը մեր պայմաններում ավելի, քան որևէ այլ շրջանում, դարձավ լեզվի բառապաշարի զարգացման ու հարստացման հիմնական միջոցներից մեկը:

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵՐ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Հատինական ասացվածքը ասում է, թե թերին բառերն են հետևում: Այդ ասացվածքի մեջ խորը իմաստ է դրված. իրոք բոլոր նոր հասկացություններն ու կուլտուրական նոր մշակույթները մի ժողովրդից մյուսին անցնելիս իրենց հետ տանում են նաև իրենց անունը, որը յուրացվում ու սեփականացվում է այդ նոր հասկացությունը յուրացվելու հետ: Սակայն քաղաքակրթված երկրներում հաճախ այդ ընդհանուր օրինաչափությունը խախտվում է. ավելի թույլ ժողովուրդները, ձուլվելու վտանգի ենթարկվելու սպառնալիքը նկատի ունենալով՝ չեն ընդունում որևէ նորամուծություն կամ օտար փոխառություն: Դրանով, իհարկե, փաստում են իրենց լեզվի հարստացմանը և արագացնում ձուլման կամ ամեն տեսակ ազդեցության ավելի շուտ ենթարկվելու պրոցեսին: Մեր պայմաններում փոխառությունների հարցը միանգամայն նոր հիմունքների վրա է դրված. այստեղ որևէ ռոնդատում կամ ստիպողական որևէ միջամտություն չկա, այլ կա ընդհանուր մոտեցում, որը բխում է ազգային լեզուների զարգացման խնդրանք-ստալինյան քաղաքականությունից: Այդ պատճառով էլ փոխառությունները, պատմական անհրաժեշտություն դառնալու հետ միասին, չեն փաստում մեր ժողովուրդների լեզուների զարգացմանը, չեն մթափում լեզուների ազգային առանձնահատկությունները:

Հայոց լեզվի մեջ բազմաթիվ օտար բառեր են մտել նաև նախասովետական շրջանում: Այդ փոխառություններն իրենց որակով տարբեր են եղել մեր լեզվի զարգացման տարրեր էտապներում: Այդ անսակետից ուշագրավ են պարսկական փոխառությունները, որոնց ազդեցության տակ մոռացվել են հայերեն շատ սովորական բառեր (սև, սպիտակ, դույն, կարմիր, կապույտ, ճակատ, պատերազմ, դար, դատավոր և այլն): Այդ փոխառու-

թյուններն ընդհանրապես առաջադիմական լինելով հանդերձ, որոշ դեպքերում հետադիմական են եղել:

Այդ փոխառությունների միջազգայնականության մասին խոսք լինել չէր կարող: Միջազգային բառերի փոխառություններ ստանձնապես զգալի են դառնում ազգային լեզուների կազմավորման շրջանից սկսած:

Սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո միջազգային բառերի գործածությունը դարձավ մեր լեզվի բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից մեկը: Այդ միջազգային բառերը և՛ իրենց որակով, և՛ արժեքով տարբերվում են նախասովետական շրջանում մեր լեզվի մեջ մտած օտար բառերից: Նրանք առաջին հերթին կապված են մարքսիստական գաղափարախոսության տարածման, բանվոր դասակարգի ուղղուցիտ շարժման ու պայքարի, մեր երկրում կատարված տնտեսական ու քաղաքական փոփոխությունների, սոցիալիստական շինարարության և կուլտուրայի բուռն վերելքի հետ: Փորձենք ընդհանուր գծերով խմբավորել միջազգային այն բառերը, որոնք ռուսերենի ազդեցությամբ, կամ ուսաց լեզվի միջոցով մտել են ժամանակակից հայերենի մեջ:

ՄԱՐՔՍԻՆԻՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԵՏ ԿԱՊԻԱԾ ԲՈՒՆԵՐ

Մարքսիզմի կլասիկները ոչ միայն ստեղծեցին աշխարհը հեղաշրջող ուսմունք, այլև մշակեցին կուռ, գիտական ճշգրտություն ու նպատակասլացություն արտահայտող տերմինոլոգիա, որի մեծ մասը նոր գաղափարախոսության տարածման հետ մտավ մեր լեզվի մեջ և այժմ հասկանալի է ժողովրդական լայն զանգվածներին: Այդ տերմինները գիտության և հասարակության զարգացման շատ ու շատ հարցեր և երևույթներ են ընդգրկում. ահա այդ բառերից մի քանիսը՝ դիալեկտիկա, մատերիալիզմ, դիալեկտիկական մատերիալիզմ, ուսույթական սոցիալիստ, մարքսիզմ-լենինիզմ, պրոլետարական դիկտատուրա, Լենինի-Ստալինի պարտիա, ինտերնացիոնալ, կոմունիստական ինտերնացիոնալ, լենինյան-ստալինյան ազգային ֆաղափականություն, Ստալինյան Կոնստիտուցիա, սոցիալիստական Լեոնոմիայի ֆունդամենտ, քեռիսո մատերիալիստական մեքող, դիալեկտիկական մեքող, ռեյուցիա և Լվուցիա և այլն:

Միջազգային այդպիսի բառեր մեր լեզվի մեջ մտնելուց բացի նոր գաղափարախոսության հետ կապված բառակազմությունների անալոգիայով ստեղծված են բազմաթիվ նոր բառակազմություններ, օրինակ՝ դասակարգային պայքար, հեղափոխական օրինապահություն, կապիտալիստական շրջափակում, արտադրողական ուժեր, արտադրական հարաբերություններ, աշխատանքի գործիք, աշխատանքի առարկա, շահագործվող դասակարգ, շահագործող դասակարգ, կապիտալիզմի մնացորդներ գիտակցության մեջ, վերացնել հակասությունները, համատարած կոլեկտիվացում, հեղափոխական տեսություն, պրակտիկական առանց տեսության կույր և, հավասարակշռության տեսություն, ինֆլաիստ տեսություն և այլն:

Կոմունիստական պարտիայի և նրա առաջնորդների՝ Լենինի և Ստալինի լեզուն իր խորը ազդեցությունն է թողել ոչ միայն ուսու, այլև այլ ժողովուրդների, որոնց թվում նաև հայ ժողովրդի լեզվի վրա. նրանց գործածած

մի շարք հասկացութիւններ կամ նույնությամբ մտել են մեր լեզվի մեջ, կամ նրանց անալոգիայով կազմվել են նոր բառակազմութիւններ: Այդ բառակազմութիւններից շատերը թեւովոր խոսք են դարձել և գործածվում են ժողովրդական լայն զանգվածների լեզվում: Ինչպես՝ Головокружение от успехов «Գլխապտույտ՝ հաջողութիւններից» (Ստալին), гнилой либерализм «նեխած լիբերալիզմ» (Ստալին), детская болезнь левизны «ախտորշյան մանկական հիվանդություն» (Լենին), догнать и перегнать «աւանել և անցնել» (Լենին), кто кого «ով՝ ում» (Լենին), лучше меньше, да лучше «լավ է, քիչ, բայց լավ» (Լենին) և այլն:

Վերջիշրջաւ նոր բառերից արդեն կազմվում են նոր բառակազմութիւնների ամբողջ փնջեր: օրինակ՝ պարտիա, կոմպարտիա, պարտալտիվ, պարտկոմ, պարտքուրո, պարտուտած և այլն: Նույնը կարելի է ասել նաև անալոգիա նույնական բառակազմութիւնների մասին: Ինչպես՝ ֆադրյուրո, ֆադմինիմում, ֆադլոմիսար, ֆադլոմ, ֆադկրքուրյուն, ֆադաֆական խմբագրություն, ֆադաֆական հանցագործություն, ֆադաֆական կմիգրանտ, ազգային ֆադաֆականություն և այլն:

ՌԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱՆԻ ԲԱՌԵՐ

Սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո միայնակսեցին լայնորեն տարածվել բանվոր դասակարգի ռեուլուցիոն պայքարի հետ կապված բառերը, որովհետև միայն այդ ժամանակ այդ նոր գաղափարները իրենց բոլոր կողմերով ու արտահայտութիւններով հասկանալի դարձան մեր ժողովրդի լայն զանգվածներին: Ահա այդ բառերից մի քանիսը՝ ազիտացիա, ազիտատուր, բոյկոտ, սովանգարդ, բարիկադ, դեկրետ, դեմոնստրացիա, դեմոկրատ, դիկտատուրա, դեսպոտ, դեսպոտիզմ, էկոնոմիստներ, էվալուցիա, ինտերնացիոնալ, ինտերնացիոնալիզմ, ինտերվենցիա, լեզալ, լիկվիդացիա, լիկվիդատոր, կոնսպիրացիա, կոմիսար, կոմունա, կոմիտե, կոմպարտիա, կոմտր-ռեուլուցիոններ, մանիֆեստ, մինիմում, մաքսիմում, պրոպագանդա, պրոպագանդիստ, պրոկլամացիա, ռեուլուցիա, ռեակցիա, սոցիալական, սոցիալիստ, տեռոր, տեռորիստ, ցենտրիզմ, ցենտրիստներ, օտգովիստ, օրքոդոֆ, օպորտունիստ, օպտիմիստ, օպոզիցիա, օրգանական, փորմացիա, փորմալ, փունկցիա և այլն:

Նշված և այլ շատ բառեր իրենց գերակշիռ մեծամասնությամբ եվրոպական բառեր են, բայց արդեն դուրս եկած եվրոպական շրջանակներից և ունի լեզվի միջոցով միջազգային դարձած՝ իրենց նոր առումով: Այդ բառերի մեծ մասը, որպես նոր փոխառութիւն, անցել է այն լեզուներին, որոնցից փոխառնված է եղել: Կոմունա բառը, օրինակի համար, այժմ ոչ մի եվրոպական լեզվում չի գործածվում իր սկզբնական իմաստով: Այդ բառը առաջացել է միջին դարերում և նշանակել է առևտրա-արհեստավարական համայնք, հասարակ բնակչութիւն (простонародье, populace), Փարիզյան Կոմունայի շրջանում նա նոր առում ձեռք բերեց, սկսեց նշանակել Փարիզի ռեուլուցիոն ինֆնալարություն, միանգամայն նոր իմաստ ստացավ այդ բառը մեր պայմաններում և այդ նոր իմաստով էլ մտավ եվրոպական շատ ժողովուրդների լեզուների մեջ: Մեր լեզվի մեջ մտած եվրոպական բառերի մեծ մասը նոր իմաստով է գործածվում: Դրանք առաջ

գործածվել են մեկ կամ եվրոպական մի քանի ժողովուրդների լեզուներում և միջազգային չեն եղել այդ բառի լայն առումով: Այժմ ոուսաց լեզվի շնորհիվ նրանք դարձել են միջազգային բառեր և աշխարհի բոլոր լեզուների մեջ են մտել որպես հասարակական նոր իրադրություն կամ հասկացություններ պաակերոդ բառեր:

ՆՈՒ ԿԱԶՄՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԻ ՄՈՒՏԲԸ ՀԱՅԵՐՆԵՒ ՄԵՁ

Կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ուժեղանում են տարբեր լեզուների բառապաշարների մեջ ստեղծված ընդհանրությունները, գոյանում են միջազգային բառեր, որոնք սկսում են ասարածվել մի շարք լեզուներում: Հատկաներեն ու հունարենը նույնիսկ ֆեոդալական հարաբերությունների գոյության ժամանակաշրջանում Արևմուտյան Եվրոպայի մի քանի երկրների համար միջազգային լեզուներ էին: Սակայն հետագայում, առանձնապես 18-րդ դարում և հետո, եվրոպական այլ լեզուները նույնպես սկսում են ներգործել միմյանց վրա և միջազգային դառնալու տենդենցներ ցույց տալ: օրինակ՝ 18-րդ դարից անգլիերեն շատ բառեր լայն գործածություն են ստանում: Լ'յուջե, միտինգ, լիդեր և այլ տերմիններ անգլիերենից մտնում են համարյա եվրոպական բոլոր լեզուների մեջ: Գերմաներենից և ֆրանսերենից նույնպես սկսում են շատ բառեր՝ առանձնապես փիլիսոփայական ու բանվորական-ուղղություն շարժման հետ կապված տերմիններ, լայնորեն տարածվել: Այդ բոլորը սակայն և իրենց որակով, և քանակով, և տարածվելու արագությամբ տարբերվում են այն միջազգային բառերից, որոնք ոուսաց լեզվից մյուս լեզուներին են անցնում:

Հոկտեմբերյան Մեծ ռեուլուցիայից հետո ոուսաց լեզուն միջազգային բառերի աղբյուրն է դառնում: Կազմվում են սոցիալիստական հարաբերությունների հետ կապված նոր բառեր ու տերմիններ, որոնք ոչ միայն եվրոպական, այլև աշխարհի բոլոր լեզուների մեջ են մտնում և կարճ ժամանակում արժատանում ինչպես գրական, նույնպես և խոսակցական, ժողովրդական լեզուներում:

Սոցիալիստական հարաբերություններն արտահայտող բազմաթիվ նոր բառեր, որոնք աշխարհի լեզուների մեջ են մտել որպես միջազգային նոր տերմիններ, իրենց բովանդակությամբ տարբերվում են մինչև այդ եվրոպական զանազան լեզուներից փոխանցված բառերից. սովետ, բոլշևիկ, բոլշևիզմ, կոլխոզ, սովխոզ, կոմսոմոլ, սովետական ռեսպուբլիկա, կոմունիստական սլախտիա, սոցիալիստական Լիոնումիկա բառերն ու բառակազմությունները միայն մեր լեզվում չէ, որ այնքան հասկանալի ու գործածական են:

Նրանք մտել են բոլոր ժողովուրդների լեզուների մեջ և գնալով ներառյց միջազգային դերը ավելի ու ավելի է աճում, որովհետև ավելի է ուժեղանում ոուսաց լեզվի ազդեցությունը ոչ միայն մեր երկրի ժողովուրդների, այլև ամբողջ աշխարհի լեզուների վրա: Ռուսաց լեզուն արդեն դարձել է այն անսպառ շտեմարանը, որից օգտվում են աշխարհի բոլոր լեզուները: Դեռևս Լենինն է նշել ոուսական շատ բառերի հսկայական դերն ու նշանակությունը համաշխարհային բանվորական շարժման մեջ. — «Այժմ

բոլոր երկրներում, — ասում էր նա, — «բոլորիկ» և «սովետ» բառերը դադարել են օտարոտի արտահայտություններ լինելուց։ Այդ ասված է մեղանից ավելի քան 20 տարի առաջ, իսկ այժմ ոչ միայն ողջ աշխարհի առանձին բառեր, այլև բազմաթիվ արտահայտություններ ու դարձվածքներ առանց թարգմանության մտել են եվրոպական շատ լեզուների մեջ և հասկանալի են բոլորին։ Ռուսական լեզուն մեր երկրի բոլոր ժողովուրդների լեզուների զարգացման անսպառ աղբյուրն է դարձել այժմ։

ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԻ ՆԵՂԱՑՈՒՄ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ

Բուրժուական լեզվաբանությունը չկարողացավ լրիվ «ափով» բացահայտել բառերի իմաստի փոփոխման պատճառները։ Նրա ներկայացուցիչները լավագույն դեպքում նկարագրում էին բառի իմաստի տարբեր փոխանցումները, կապելով այդ պատմական որոշ տվյալների հետ, օրինակ՝ սոցիալական դպրոցի ներկայացուցիչ լեզվաբան Վանդրիեսը քննում է բառի իմաստի փոփոխման տարբեր տեսակները, ուսումնասիրում է իմաստի փոփոխման ընթացքը, միանգամայն ճիշտ կերպով նշում, որ բառի իմաստը չի կարող միշտ անփոփոխ մնալ։ Բայց այդ բոլորով հանդերձ, չի կարողանում ցույց տալ բառի զարգացման ընդհանուր օրինաչափությունները, գտնել բառի իմաստի փոփոխման պատճառները։ Նա բառիմաստի փոփոխումը կապելով հասարակական գիտակցության հետ, այդ գիտակցությունը ժամանակից ու տարածությունից դուրս է համարում։ Նա չի կարողանում տեսնել, որ բառերի իմաստի զարգացման, կամ փոփոխության օրինաչափությունների ընդհանուր համակարգը վերջին հաշվով պայմանավորված է հասարակական-տնտեսական հարաբերությունների զարգացման աստիճանով։

Շատ միջազգային բառեր մեր երկրում կատարված փոփոխությունների հիման վրա փոխեցին իրենց իմաստը և մասնագիտացան։ Այդ բառերից է, օրինակի համար, պիոները, որով 17-րդ դարում Ֆրանսիայում անվանվում էին միայն ռազմական ճանապարհ պատրաստող բանվորները։ Ամերիկայի հայտնագործումից հետո «պիոներ» կոչվեցին առաջին ճանապարհաշինարարները Ամերիկայում։ 18-րդ դարի վերջերից որոշ չափով ընդարձակվեց այդ բառի իմաստը և նշանակեց ընդհանրապես «նոր զործ սկսող», իսկ սովետական պայմաններում նեղացավ, մասնագիտացավ այդ բառի իմաստը։ Տեմպ լատիներեն բառ է (tempus) և նշանակել է ժամանակի որոշ միավոր։ Իսկ մեզ մոտ նոր իմաստ է ստացել (համեմատիք տեմպերը ուժեղացնել, տեմպը թուլել է, զարգացման տեմպը և այլն)։ Շեֆ, ֆրանսերեն chef բառն է, որը նշանակել է ղլխավոր, իսկ այժմ մոտավորապես նշանակում է խնամակալություն, խնամաբարություն, այդ բառով կազմված են զանազան բառարարությունների, որոնք միայն սովետական հարաբերություններով են պայմանավորված։ օրինակ՝ շեֆ գյուլ, եմքաշեֆ, շեֆությունը վերցնել և այլն։

Բազմաթիվ այլ բառեր իրենց մասնագիտական առումներով ողջսերենից անցել են մեր լեզվին, օրինակ՝ ասպիրանտ, ակտիվիստ, ագրոմիմիում, տեխմիմիում, ուտիլ, ալիմենտ, էկոնոմիա և այլն։

Սակայն այստեղ պետք է նշել, ընդհանուր առմամբ, մասնագիտացման մի կարևոր երևույթ. ուսուցիչների ազդեցությամբ ներգրավվում, մասնագիտական իմաստ են ստանում հայերեն շատ բաներ. օրինակ՝ ակումբներ, ակումբորդ, ակումբու, դիսկոթեկ, դիսկո, կոկոնակալում, զրահահար, խորասույզ, վայրսույզ, ինֆնազնագ և այլն. որոնք ոչ շատ առաջ, Հայրենական պատերազմի շրջանում, մասնագիտական նոր առումներ ստացան:

Այս երևույթը, պետք է ասել, իր բովանդակությամբ նոր է մեր լեզվաշինարարության մեջ: Առաջներում նույնպես բառերի մասնագիտացում էր կատարվում. սակայն հաճախ չէր ընդունվում բոլորի կողմից. կամ էլ շատ հեղհեղուկ էր լինում, մինչդեռ մեր իրականության մեջ միանգամայն հակառակ գրություն է իշխում, որովհետև մեր լեզվի զարգացումը կատարվում է մեր ժողովրդի լայն զանգվածների ու պետության գործունե մասնակցությամբ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՆԵՐՇՈՍԱՆՔԸ ՄԵՐ ԼԵԶՎԻ ՄԵՋ

Սոցիալիստական հասարակարգում վերացան արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև եղած հակասությունները. արտադրական հարաբերությունների հիմքը դարձավ արտադրության հանրային սեփականությունը, որի հետևանքով չտեսնված արագությամբ վերակառուցվեցին արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, արագ կերպով զարգացան գիտության ու տեխնիկայի բոլոր ճյուղերը և ստեղծվեցին ընդհանրություններ ինչպես մեր ժողովուրդների նյութական կյանքի պայմանների, նույնպես և նրանց լեզուների միջև: Արագ կերպով մեր լեզվի մեջ մտան մեր երկրի արդյունաբերության, ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, գիտության զանազան ճյուղերի զարգացման հետևանքով կազմված մասնագիտական բազմաթիվ նոր բաներ ու բառակազմություններ, ստեղծվեցին տերմինաբաններ, տպագրվեցին բառարաններ, մշակվեց գիտության ու փիլիսոփայության լեզու:

Տեխնիկայի ու գիտության զանազան բնագավառներին վերաբերող բաները ստեղծվել են մեր լեզվում կամ նույնական բառակազմությունների միջոցով կամ կազմվել են ուսուցիչների անալոգիայով: Մասնագիտական այնպիսի նույնական բաներ, ինչպիսիք են՝ աղբեղատ, սվտո, ավտոբազա, ավտոտրանսպորտ, բրակ, բրոնյա, զաղ, զենքատուր, դեմարկացիա, էլեկտրիֆիկացիա, էլեվատոր, կինո, կինեմատոգրաֆ, կինոֆիլմ, կինոսպեկտոր, կոնֆիգիենտ, կոմբայն, կոմբինատ, ռադիո, ռադիոֆիկացիա, ռադիոգրաֆիա, ռադիստ, ռադիոգրամ, ստանդարտ, սուլֆիդին, ստաբիլ, տեխնիկա, տրակտոր, տրակտորիստ, տանկ, սուրպեդ, վոնդ, փակտուրա, փոտոէպոքսիդ և այլն հասկանալի են մեր ժողովրդական լայն զանգվածներին, որովհետև այժմ գիտությունը դուրս է եկել սահմանափակ թվով մարդկանց պատկանելու շրջանակներից և դարձել է համաժողովրդական սեփականություն:

Սակայն մեր լեզուն կանգնած կլինի անհասկանալի դառնալու վտանգի առաջ, եթե բաներ փոխառնելու հետ չստեղծվեն սեփական մասնագիտական տերմիններ: Դրանք, ինչպես նշել ենք, մեծ մասամբ ստեղծվում են ուսուցիչների անալոգիայով, սակայն այնպես, որ չհակասեն մեր տնտեսության ու գիտության զարգացման ու ժողովրդի լայն զանգվածներին մաշելի դառնալու սկզբունքներին:

Այսպիսի անալոգիական բառակազմություններ են՝ ավտոմեքենա, անջատիչ, արտածում, ավտոկայան, մեքենատրակտորային կայան, բրիզադիր, գործարանային ցեխ, գործարկում, գյուտարարություն, գյուտարար, արտադրություն, գերակատարել, գերձանրաբեռնվածություն, զծանավ, զծագիր, զծագրություն, զսարնթաց, զինտրիբունայ, զրահապատ, զրահագնացք, էլեկտրակայան, էլեկտրաֆարշ, բերակատարել, բերարտադրություն, կոկոնում, խողովակալում, մեկուսիչ, մոյասորգո, պտուտակ, քեռուցում, ռադիոկայան, ռազմական տրիբունայ, ռադիոբարձրախոս, ռադիոընդունիչ, սեյսմիկ կայան, վալյուրգյան գիշեր, վինակագրություն, վիճակագրական բաժին, տարանցիկ, տարողություն, տորպեդահար, փակոց, փակիչ, փայտամշակում, ֆարամրիկ, օգտակար հանածոներ, օդերևութաբանական կայան, օղաչու, օղագնաց և այլն:

Մեր լեզվի հարուստ բ.սոսպաշարը հնարավորություն է տալիս կազմելու գիտություն ու տեխնիկայի բոլոր ճյուղերին հատուկ հասկացություններ ու արտահայտական պրոցեսի մանրունքներ արտահայտող առանձին բառեր: Սակայն այս դեպքում էլ պետք է ղեկավարվել լեռնյան-ստալինյան ալգային քաղաքականության պահանջներով և մեր լեզուն չդարձնել ամուլ, որեէ ազդեցություն չընդունող և զարգացման հեռանկարները կորցրած լեզու: Առանց որեէ կասկածանքի պետք է փոխառնել գիտական ու տեխնիկական բոլոր այն բառերը, որոնք նոր ըմբռնումների հետ են կապված և նոր իմաստներ են արտահայտում:

Այդ հարցում ևս մեզ օգնության է գալիս ռուսաց լեզուն:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Մեր երկրում առանձնահատուկ զարկ տրվեց սպորտային կուլտուրայի զարգացմանը: Սովետական Միությունն այս բնագավառում էլ անցավ կապիտալիստական երկրներից: Սպորտային մի շարք ճյուղերի հայրենիք Անգլիան նույնիսկ սպորտային կուլտուրայի որոշ բնագավառներում իր դիրքերը զիջել է Սովետական երկրի մարմնամարզիկներին: Սպորտի զանազան տեսակների տարածումը պետք է հանգեցներ նաև սպորտային միջազգային բառերի տարածմանն ու մասսայականացմանը:

Սպորտային մի շարք բառեր լայնորեն սկսեցին գործածվել նախ մեր առանձին մարմնամարզիկների, ապա ամբողջ ժողովուրդների մեջ. ալպինիզմ, ալպինիստ, գոլ, գրոսմայստեր, բեկ, քայմ, մարզ, մոտոսպորտ, կռման-գոր, կրոս, կրոսվորդ, չեմպիոն, չեմպիոնատ, ռեկորդ, ռեկորդսմեն, սպորտ, սպորտսմեն, տենիս, տենիսիստ, տուրնիր, տուրիստ, շախմատ, փորվարդ, փուտբոլ, փուտբոլիստ, փինիչ, և այլն, սպորտային բառերը վաղուց է. ինչ մտել են մեր գրական ու խոսակցական լեզվի մեջ:

Այստեղ հաճախ մրցում են միջազգային և ազգային բառերը, բայց տենդենցը տանում է դեպի միջազգային դարձված բառերի հաղթանակը: Այդ պրոցեսը արագանում է մանավանդ այն բանի շնորհիվ, որ Սովետական Միության ու արտասահմանյան երկրների սպորտսմենների հանդիպումներն ավելի ու ավելի են հաճախակի դառնում, իսկ Սովետական Հայաստանը, որպես մեր Միության մի մասնիկը, այդ ընդարձակ հարաբերու-

թյուններից հեռու չի կանգնած և գործուն մասնակցություն է դույց տալիս սպորտային կուլտուրայի զարգացմանը մեր երկրում: Այժմ արդեն Հայաստանում գործում է ֆիզկուլտուրայի ինստիտուտ, ուր մշակվում ու հիմնավորվում են ֆիզիկական կուլտուրայի զանազան տեսակներին նվիրված տերմիններ, որոնք տարածվում են մեր ազգայնականության լայն խավերի մեջ:

Այսպիսով, մեր կյանքի բոլոր ընդգծվածներում էլ մենք նկատում ենք ուժեղ առաջիադասություններ և դրանց հետ կապված նոր բառերի ու հասկացությունների մուտքը մեր լեզվի մեջ:

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսերենից մեր լեզվին անցած միջազգային բառերի արտասանությունը հարցը քննելիս մենք առաջին հերթին նկատի ենք ունենում շեշտադրությունը, ապա՝ մի քանի տառերի արտասանությունը:

Հայերենի շեշտադրությունը խստորեն տարբերվում է ռուսերենի շեշտադրությունից: Հայերենում շեշտը կայուն է, նա դրվում է բառի վերջին վանկի վրա, եթե այդ վանկի ձայնավորը ընդհատված չէ: Երբ բառի վերջին վանկի ձայնավորը ընդհատված է, օրինակ՝ քաղցր, թանձր, մեղր և այլն, շեշտը դրվում է նախավերջին վանկի վրա: Բացառություն են կազմում նաև այն կցական բարդությունները (գլխավորապես հարցական դերանուններն ու շաղկապները), որոնց մեջ առաջին բառի իմաստը ավելի է ընդգծվում: օրինակ՝ նույնպես, նույնիսկ, նախքան, նամանավանդ, երբևե, ինչպիսի, որտեղ, ինչպես և այլն: Հայերենի անխախտելի շեշտադրությունը, սակայն, ռուսերենի աղդեցությունից որոշ փոփոխության է ենթարկվել՝ օտար բառերում: Ռուսերենից վերցրած բառերը, որպես ընդհանուր կանոն, եթե գործածվում են ուղիղ ձևով, պահպանում են իրենց շեշտադրությունը: օրինակ՝ անալիզ, անալոգիա, Լեռնոստով, կոնստրուկցիա, մոխորկա, պսիխոլոգիա, Պոլկին, ռեցենզիա, ռեֆորմացիա, Սարաթով, Սեաստոպոլ, սինթեզ, ստատիստիկա, Ուկրաինա, տերմին, օպերա, ֆիզիկա, ֆիլոլոգ, քիմիա, ֆորմացիա և այլն: Երբ օտար կամ ռուսերեն բառերը գործ ենածվում թեթևած ձևով, ենթարկվում են հայերենի շեշտադրության օրենքներին, այսինքն՝ շեշտը դրվում է նրանց վերջին վանկի վրա: Օրինակ՝ օպերայում, անալիզներով, Սարատովում, տեխնոլոգները, ֆրգրայից և այլն:

Ռուսերենում շեշտից առաջ ընկած օ-երը արտասանվում են ա կամ ավելի մոտենում են ա-ին, քան օ-ին: Այդ բառերը հայերենում տառադարձվում են ուով (բառամիջում), բայց հաճախ պահում են ռուսական արտասանությունը: Այդպիսի դեպքերում լավ կլիներ, որ նրանք արտասանեին ուով, օրինակ՝ ոչնչով չի տուժի հետևյալ ռուսական բառի արտասանությունը, եթե արտաբերենք Դոնչարով (և ոչ՝ Դանչարով), Բորոգինո (ոչ՝ Բարադինո), Դորոլյուրով (ոչ՝ Դարալյուրով), կոմունիստ (ոչ՝ կամունիստ), կոնտինգենտ (ոչ՝ կանտինգենտ), Մոսկվա (ոչ՝ Մասկվա), մոտոր (ոչ՝ մատոր), պիոներ (ոչ՝ պիաներ), պրոգնոս (ոչ՝ պրագնոս), պրոսպեկտ (ոչ՝ պրասպեկտ), պրոֆեսիա (ոչ՝ պրաֆեսիա), Օդեսա (ոչ՝ Ադեսա), օվացիա (ոչ՝ ավացիա) և այլն:

Օտար բառերի վերջին վանկերի օ-ն հայերենում հաճախ արտասանվում է մոտավորապես ր. օրինակ՝ դիրեկտոր, ռեզոնատոր, պրոֆեսոր, կոմպոզիտոր, կոմպերսոր և այլն: Այդ արտասանությունը ոչ հայերենին է հարազատ և ոչ էլ ռուսերենին, թեև կատարվում է ռուսերենի ազդեցությամբ: Այդ պատճառով էլ ամեն կերպ պետք է պայքարել նման երևույթների, ինչպես նաև որոշ բաղաձայնների փափկացման տենդենցների դեմ, որովհետև գրական հայերենին խորթ է նաև բաղաձայնների քմայնացումը:

Ռուսաց լեզուն զնալով ավելի ու ավելի է տարածվում. նա մեր մայրենի լեզվի հետ միասին անհրաժեշտություն է դարձել ամբողջ ինտելիգենցիայի համար: Եվ որքան որ տարածվում ու մասսայականանում է ռուսերենը, այնքան ուժեղ է զգացվում ռուսերենի նպաստող դերը մեր լեզվի կուլտուրական մակարդակը բարձրացնելու մեջ:

*

Մենք այս հոգիվածում ամենաընդհանուր ձևով խոսեցինք մեր լեզվի զարգացման որոշ օրինաչափությունների մասին միայն, օրինաչափություններ, որոնք պայմանավորված են ռուսական կուլտուրայի զարգացման աստիճանով, ռուսաց լեզվի առաջատար դերով:

Ռուս մեծ ժողովրդի մշակույթը երբեք փոքր ազգերի կուլտուրան իր մեջ ձուլելու տենդենցը չի ունեցել, իսկ սովետական կարգերում նա դարձավ մեր երկրի ժողովուրդների լեզուների և մտավոր զարգացման ամենախոշոր գործոններից մեկը: Այդ արգասավոր ներգործության շնորհիվ էլ գրական հայերենը դեպի իր զարգացման բարձունքներն է դիմում: Եվ հետո չէ այն ժամանակը, երբ նա ամբողջ հայ ժողովրդի սեփականությունը դարձած՝ հավաղագային լեզվի ամենաբարձր աստիճանին հասած կլինի:

С. Казарян

Некоторые проявления влияния русского языка на армянский

РЕЗЮМЕ

Русский язык—наивысшее достижение человечества. Он хотя родной язык великого русского народа, но любим всеми народами Советского Союза и передовым человечеством всего мира, ибо на этом языке распространяются великие идеи социалистической революции, на этом языке написаны бессмертные произведения Ленина и Сталина и многочисленные художественные, научные, философские труды, которые уже вошли в сокровищницу истории мировой культуры.

Русский язык и русская культура любимы нашим народом еще и потому, что под их благотворным воздействием развиваются языки и национальные культуры народов нашей страны.

Армянский язык имеет многовековую историю, но никогда он

не знал таких гигантских сдвигов, какие произошли под воздействием русского языка в советский период его развития.

В этой статье рассматриваются некоторые факты этих сдвигов:

1. По аналогии русского языка в армянском языке образовались многочисленные слова и словообразования. Например, *աշխարհ* (трудодень), *գերազանցիկ* (отличник) и т. д.

2. С русского языка в армянский язык вошли многочисленные идентические слова и словообразования. Например, колхоз, совет, бригадир, большевик, партия, батрак, совхоз, нарком и т. д.

3. Под влиянием русского языка многочисленные армянские слова получили новое значение. Например, *մրցում* (соревнование), *օղակ* (звено), *հարվածախն* (ударник) и т. д.

4. Через русский язык вошли в армянский язык многочисленные новые слова, которые связаны:

а) с распространением марксистско-ленинского учения, как то: диалектика, марксизм, ленинизм, социализм, теория, утопизм, эквивалент, эмпирик и т. д.

б) с революционным движением рабочего класса, как то: агитация, бойкот, авангард, деспот, эволюция, революция, экономизм, легальный марксизм, манифест и т. д.

5. Под влиянием русского же языка распространяются новообразованные интернациональные слова, как, например: совхоз, совет, большевизм, меньшевизм, колхоз, комсомол, пионер и т. д.

6. Армянский язык через русский язык воспринял многочисленные специальные слова, например, агрегат, авто, брак, броня, газ, генератор, элеватор, кино, гол, альпинизм, бек, цех, цитрус, цемент и т. д.

7. Под влиянием русского произношения подвергается изменению также и произношение многочисленных армянских слов и употребляемых в армянском языке международных слов.